ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ
ԱՆՈՒՅՇ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Խուդավերդյան,

ի պատասխան Ձեր 13.03.2024թ. հ.004 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետի 12.06.2006թ. հ.948-Ա որոշմամբ Նոր Նորքի Թոթովենցի փողոցին հարող այգու տարածքից՝ եկեղեցու շինարարություն իրականացնելու նպատակով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ առանց մրցույթի, անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրվել է 4,4հա հողամաս, որից 0,36հա՝ կառուցապատման նպատակով և թողարկվել հ.2096-2006 գլխավոր հատակագիծը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ նշված որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի 13.12.2004թ. հ.2111 գրությունը՝ ՀՀ կառավարության 19.04.2001թ. հ.330 որոշման 5-րդ կետին համապատասխան Երևանի թաղային համայնքներում եկեղեցիների կառուցման նպատակով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն հողամասեր տրամադրելու հարցին լուծում տալու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ